ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 14/59793հ

«21» 10 2014թ.

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ-ի իրավաբան
պրն Գ.Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր՝ 14.10.2014թ. հ.223-ի 9 գրության վերաբերյալ, կապված մայրաքաղաքի Ծարավ Աղբյուրի փողոցի տրանսպորտային սպասարկման խնդրի հետ, հայտնում եմ հետևյալը:

Ծարավ Աղբյուրի փողոցի բնակչության տրանսպորտային, սպասարկման վիճակը բարելավելու նպատակով Երևանի քաղաքապետի 2012թ. մարտի 30-ի հ.2911-Ա որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցով նախատեսվել է ավտոբուսային հ.2 երթուղին (Քանաքեռ-Պրոթեզավորման կենտրոն - Կիլիկիա): Նշված երթուղու, ինչպես նաև երթուղային ցանցում ընդգրկված մի շարք այլ ավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքի համար պարբերաբար, սահմանված կարգով, հայտարարվել են մրցույթներ, սակայն ավտոբուսներ ձեռք բերելու նպատակով ֆինանսական ներդրումներ չեն կատարվել, հայտարարված մրցույթներին հայտեր չեն ներկայացվել և մրցույթները համալրվել են չկայացած:

Հարկ է նշել, որ մինչև նոր մրցույթների անցկացումը և արդյունքում ավտոբուսային հ.2 երթուղու սպասարկման ապահովումը, ուսումնասիրվում են Ծարավ Աղբյուրի փողոցը ներկայումս գործող որևէ երթուղու միջոցով սպասարկելու հնարավոր այլ տարբերակներ:

Աշխատակազմի տրանսպորտի
վարչության պետ Հ.Նավասարդյան

Հ.Մելքումյան
514 198